ԱՆԴՐԱՆԻԿ ԱՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՄԵՌԱԾ ԱՍՏԾՈՆ» ՈՒՍՄՈՒՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Արևմտյան քաղաքակրթության ու մշակույթի մեջ «մեռած Աստծո» մոտիվի կամ ուսմունքի, նույնիսկ երևույթի առկայությունը փիլիսոփայության ու գրականության մեջ և ոչ միայն, վերջին երկու կամ երեք հարյուրամյակներում պատմականորեն նոր ժամանակակից մարդու նույնքան էլ նոր գիտակցության, ավելի շուտ ինքնագիտակցության և ժամանակակից մշակույթի մեջ տեղի ունեցող որակական փոփոխությունների արտացոլում և արդյունք էր:

«Մեռած Աստծո» մոտիվը ժամանակակից մարդու և աշխարհի բնութագիրն է, մարդու էութենական առանձնահատկությունը, նրա մտածողության որակական բովանդակությունն ու հատկությունը, նրա գիտակցությունն է, ավելի շուտ ինքնագիտակցությունը և ինքնաբմբռնումը, նրա ինքնահաստատումը, գաղափարական ուղղվածությունն ու տրամադրությունն այս կյանքում: Ահա թե ինչու արևմտյան մշակույթի ու քաղաքակրթության հոգևոր գործունեության և գիտակցության ձևերի բոլոր հնարավոր ոլորտներում և տարատեսակներում գոյություն ունի կամ գերակա է «մեռած Աստծո» մոտիվը, փիլիսոփայության, գրականության, արվեստի, կերպարվեստի, էթիկայի, էսթետիկայի և այլնի մեջ: «Աստծո մահը, - նշում է ռուս փիլիսոփա Գուբինը, - ջրբաժան է եվրոպական փիլիսոփայության ու կուլտուրայի մեջ»[1], սակայն դա, ըստ նրա, մեկանգամյա միջադեպ չէ, այլև գործընթաց է, որը շարունակվում է ավելի քան մեկ հարյուրամյակ, մի գործընթաց, որը հեղափոխական, բեկումնային, նույնիսկ կորստաբեր նշանակություն ունեցավ փիլիսոփայական կատեգորիաների ու հասկացությունների համար[2]: Այն «տակնուվրա» արեց մինչ այդ գոյություն ունեցող և կրոնական սփոփանքի ու եկեղեցական խնամակալության տակ գտնվող ողջ գաղափարական-մետաֆիզիկական համակարգերը, աշխարհայացքային-արժեքաբանական կողմնորոշումները և որոշակի առումով քաոս առաջացրեց մարդկանց կյանքում և նրանց ինքնագիտակցության ու ինքնաբմբռնման մեջ: Դեռ XIX դարից սկսած նկատելի է դառնում հետքրիստոնեական դարաշրջանի առաջացման առանձնահատկությունները, ինչն աննկատ չի մնում այնպիսի մտածողների կողմից, ինչպիսիք են Կիերկեգորը, Դոստոևսկին ու Նիցշեն:

Հին կրոնա-դիցաբանական աշխարհայացքի ու աշխարհընկալման, հին մտածողության և մետաֆիզիկայի ու աշխարհի կրոնական պատկերի փլուզումը մի կողմից և նորի դեռ առաջացումն ու կազմավորումը, ավելի շուտ լինելիությունը, որն ինքնին կայացման գործընթաց է, մյուս կողմից, բնականաբար ստեղծում են համապատասխան ճգնաժամային-անցումային վիճակ, որին բնորոշ է վախի զգացումը, տագնապի գիտակցումը և խուճապային իրարանցումն ու անելանելիությունը՝ լաբիրինթոսում հայտնված լինելը մարդկանց գիտակցության ու հոգեվիճակի մեջ: Ժամանակակից մարդն այլևս չի առաջնորդվում այս աշխարհում տրանսցենդենտ, այլ իմմանենտ կողմնորոշմամբ ու չափումով: Եթե անգամ կա տրանսցենդենտ նշանակություն այս կյանքում, անգամ կրոնական հարթությունում, միևնույն է, դա ինքնատրանսցենդենտ կողմնորոշում է, այն է՝ մարդու վերանձնային մակարդակը, որը գործ չունի այնկողմնային ենթադրյալ իրականության, Աստծո կամ գերբնականի հետ առհասարակ: Հետևաբար, հնի կործանումը և նորի դեռ կայացումը կամ լինելիությունը որակվում կամ բնութագրվում է որպես «Աստծո մահ» կամ «մեռած Աստծո» դարաշրջան, որում Աստված այլևս չի գործում որպես աշխատանքային վարկած, որպես մարդու պրոբլեմ-լուծող և կարիքներ-բավարարող, որի գոյությունն այլևս չի ընդունվում որպես ճշմարտություն և իրականություն, որը դարձել է ավելորդ բան ժամանակակից աշխարհիկ մարդու համար, որը վերածվել է կուռքի կամ մշակութային «բրածոյի», աստվածաբանական անհեթեթ ուսմունքի, փիլիսոփայական դատարկ հասկացության կամ մետաֆիզիկական անօգուտ գաղափարի արևմտյան ժամանակակից աշխարհիկ մշակույթի և քաղաքակրթության մեջ: Այլ կերպ ասած, Աստված ոչ միայն անհրաժեշտ չէ, այլ անհամապատասխան է, հետևաբար մեռած:

Աստծո մահը ցույց է տալիս հին դարաշրջանի արևմտյան քրիստոնեական քաղաքակրթության ու մշակույթի կործանումը և նոր դարաշրջանի հետքրիստոնեական քաղաքակրթության արշալույսը և կայացումը, նրա կառուցումն ու կազմավորումը հին դարաշրջանի մնացորդ-բեկորների և այլևս մեռած Աստծո գերեզմանի վրա: Պոստքրիստոնեականն անցումային վիճակ է, հնի ու նորի հարաբերակցության լարվածության կիզակետ, երբ հինը փորձում է պահպանել իր դիրքերը, չնայած որ արդեն դատապարտված է և հետեզիտետ կործանվում է և, երբ նորը դեռ լրիվ թափով ու ուժով ամբողջությամբ չի գրավել իր դիրքը և հաստատել իր իրավունքներն ու ազդեցության ոլորտը:

«Մեռած Աստծո» կամ «Աստծո մահվան» մոտիվը ժամանակակից աշխարհում անցում է մոդեռնից դեպի պոստմոդեռն և հանդիսանում է այդ անցման որակական հատկությունը: Դա գիտակցության փոփոխություն է, այն է որակապես նոր գիտակցության ձևավորման գործընթաց-անցում է, որին

բնորոշ են բովանդակային որակական փոխակերպումներ և առանձնահատկություններ: Այս պատճառով է, որ «մեռած Աստծո» ուսմունքն առհասարակ և 1960-ականների «Աստծո մահվան» աստվածաբանությունը՝ մասնավորապես կարելի է բնութագրել որպես պոստմոդեռնի մտածելակերպ ու գիտակցություն, ինչպես նաև հերմենևտիկա, որի լույսի ներքո հնարավոր է դառնում հասկանալ ու բացատրել արդի աշխարհը և մարդուն, ներկա իրավիճակը և պայմանները, որի համատեքստում ապրում է ժամանակակից մարդը և ձևավորվում է նրա աշխարհայացքն ու վերաբերմունքը (այն ամենի նկատմամբ, ինչը տեղի է ունենում իրեն շրջապատող աշխարհում և իրականությունում):

Այս առումով Աստծո մահը ժամանակակից մշակույթի գլխավոր իրադարձությունն է, ինչը նկատել ու բարձրածայնել է իր ժամանակին Նիցշեն: Նիցշեի կանխասացությունն իսկապես մարգարեական նշանակություն է ունեցել մոդեռն-պոստմոդեռն դարաշրջանի համար: Սա այն ֆենոմենն է, որը համատարած կիրառություն է ունեցել (և շարունակում է ունենալ) ժամանակակից մարդու և հասարակության կյանքում:

Պատմականորեն «Աստված մեռած է» կամ «մեռած Աստված» արտահայտությունը սկիզբ է առել ոչ թե Նիցշեից և ոչ էլ Հեգելից, այլ լութերական եկեղեցական օրհներգի (շարականի) մեջ օգտագործված հենց «Աստված մեռած է» նախադասությունից, որի հեղինակն էր լութերական Զոհանես Ռիսքը[3]: Այս օրհներգը գրվել է 1641թ.[4]: Սինչ Նիցշեն «Աստված մեռած է» արտահայտությունը փիլիսոփայական գործածում է ստացել Հեգելի կողմից և նրա միջոցով է այս գաղափարը մուտք գործել փիլիսոփայական գրականության մեջ: Բայց Հեգելը լիովին այլ իմաստով է գործածել «Աստված մեռավ» միտքը ի տարբերություն Նիցշեի: Հեգելը «Աստված մեռավ» կամ «Աստված մեռած է»՝ գաղափարը գործածել է խաչի վրա Քրիստոսի մասիվան հետ, այն էլ մասիվան կոնտեքստում: Ըստ Հեգելի, Քրիստոսի մահը խաչի վրա նշանակում էր նրա մարդկային էության մահը և, քանի որ մահը բնական երևույթ է, ապա այն ցույց է տալիս մարդու վերջավորությունը և բացասումը: «Աստված մեռավ» միտքը «այն գիտակցումն է, որ մարդկայինը, վերջավորը, փխրունը, անօգնականը, բացասականը կազմում են հենց աստվածայինի պահը (որ դրսևոր) ևսն Աստծո մեջ»[5]:

Ըստ Հեգելի, մահն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական նշանակություն: Առաջին դեպքում, մահվամբ դուրս է հանվում մարդկայինը և դարձյալ հանդես է գալիս աստվածային մեծությունը, իսկ երկրորդ դեպքում մահը նաև բացասական երևույթ է, այն առավելագույն կետն է, որին ենթակա է մարդը որպես բնութենական կեցություն, և որին նույնպես ենթակա է նաև Աստված: Մարդը, ըստ Հեգելի, ինքն իրենում աստված է և դրա հետ մեկտեղ

նաև մահկանացու: Մահն ինքնին բացասում է[7], ինչպես նաև «բացասմանն պահը... մահ է»[8], հետևաբար բացասման պահը, որը մահն է, նշանակում է նաև «Աստծո մահը», այսինքն Աստծո մահը նշանակում է Աստծո ինքնաբացասումը: Բացասումն Աստծո էության մեջ դրսևորվող իմմանենտություն է[9]: Քրիստոսի մահվամբ Աստված ինքնաբացասեց իրեն և դա մեկանգամյա ակտ չէ, այլ «հավերժական աստվածային պատմություն, դա մի պահ է հենց Աստծո բնության մեջ, դա տեղի է ունեցել հենց Աստծո մեջ»[10]:

Այսպիսով, Հեգելի կրոնի փիլիսոփայության համակարգում «Աստծո մահը» կամ «Աստված մեռավ» գաղափարը հասկանալի է Քրիստոսի մահվան կոնտեքստում, որում մահն առհասարակ դիտվում է որպես բացասում, իսկ Աստծո մահը որպես նրա ինքնաբացասում Քրիստոսի մահվան մեջ, որը շարունակական բնույթ է կրում, և արդյունքում Աստված դառնում է (բացարձակ) ոգի:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ «մեռած Աստված» խոսքը իր մշակութաբանական իմաստով ու կիրառմամբ, որը հայտնի է ժամանակակից մարդուն, սկզբնավորվել է հենց Նիցշեից, որն առաջին անգամ 1882թ. օգտագործեց այն իր «Զվարթ գիտություն» երկում, այնուհետև այս թեմային նա անդրադարձել է նաև «Այսպես խոսեց Զրադաշտը» աշխատությունում՝ կիրառելով այն իր ժամանակի համատեքստում, վերլուծելով իր ժամանակաշրջանի մշակութային ու հոգևոր-գաղափարական իրավիճակը: Նիցշեի «մեռած Աստված»-ն էականորեն տարբերվում է Հեգելի «Աստված մեռավ» գաղափարից: Իրականում դրանց մեջ ոչ մի ընդհանրություն չկա:

«Զվարթ գիտություն» աշխատությունում գործածված «Աստված մեռավ» խնդրահարույց ասույթը բազում մեկնաբանությունների առիթ հանդիսացավ: Չնայած նիցշեագիտության մեջ առկա տարաբնույթ բազմազանությանը և անգամ կարծիքների դիմադարձությանը, այնուամենայնիվ, մի բան հստակ է և Հաբերմասի կարծիքով այն է, որ Նիցշեն հանդիսանում է պոստմոդեռնի սկզբնավորման մեկնակետը[11]: Նիցշեի կարևորությունն ու ազդեցությունն իրոք շատ մեծ է, նրա գիտակցական կյանքի վերջին տարիները «համաշխարհային մտքի պատմության մեջ ամենախռովյալները և ամենախռովարարները կլինեն՝ կծնեն երկեր, որոնք «պատմությունը երկու մասի կբաժանեն» և «երկրագունդը ջղաձգումների մեջ կգցեն». այս ինքնաբնութագրումների խանդավառ-վերամբարձ և ինքնամեծարիչ տոնը մի կողմ թողած՝ առնվազն անկիծելիորեն կկանխատեսեն համաշխարհային պատմության հետագա համարյա բովանդակ պաթոսը և իրենցով կկանխորոշեն փիլիսոփայական մտքի գրեթե ողջ թեմաներն ու առաջադրությունները. փիլիսոփայությունը, գրականությունը և, ընդհանրապես, մտքի պատմությունը»[12]: Եվ նրա «Աստծո մահը» խոսքը յուրօրինակ կանխասածություն է XX դարի մարդկանց գիտակցության և մտածելակերպի

մեջ տեղի ունեցող փոփոխությունների, մարդու տեղի ու դերի վերաբերյալ ունեցած նրա ինքնաըմբռնման և ինքնահաստատման, աշխարհը կառավարելու մարդու իշխանատենչ ձգտումների ու երկրի վրա աստված դառնալու նույնքան էլ աստվածատենչ ցանկությունների մասին և ուրվագծում է այն ուղին, որով ընթանալու է մարդկությունը: Այս առումով, արևմտյան մշակույթի կոնտեքստում Նիցշեն մոդեռն-պոստմոդեռն իրավիճակի և դրա զարգացման դինամիկան ու օրինաչափությունը կանխասացող փիլիսոփա-մարգարե է:

«Զվարթ գիտություն» երկում Նիցշեի «խենթը», որը խորհրդանշում էր իմաստունին, օրը ցերեկով վազեց շուկա և սկսեց գոչել. «Ես փնտրո՜ւմ եմ Աստծուն. Ես փնտրո՜ւմ եմ Աստծուն»:- Քանի որ այնտեղ հավաքվածների մեջ շատ էին հենց նրանք, ովքեր Աստծուն չէին հավատում, նա մեծ քրքիջ հարուցեց: Ինչ է, Աստված կորե՞լ է ասաց մեկը: Չլինի՞ թե նա մոլորվել է, ինչպես երեխա ասաց մյուսը: Կամ թաքնվե՞լ է: Նա մեզանից վախենո՞ւմ է: Չլինի՞ նավ է նստել, այստեղից արտագաղթել է,- այսպես խառնիխուռն գոչում էին նրանք և հռհռում: Խենթը նետվեց նրանց մեջտեղը և իր հայացքով շամփրեց նրանց: «Ո՞ւր է Աստված,- գոչեց նա,- ես ձեզ կասեմ: **Մենք նրան սպանե՞լ ենք՝** դուք և ես: Մենք ամենքս նրան սպանողնե՞րն ենք: Բայց ինչպե՞ս արեցինք մենք այդ: Ինչպե՞ս կարողացանք խմելով դատարկել ծովը: Ո՞վ մեզ սպունգը տվեց ջնջելու ողջ հորիզոնը: Ի՞նչ արեցինք մենք, երբ այս երկիրը արձակեցինք իր արևին կապող շղթայից: Ո՞ւր է երկիրը հիմա գնում: Ու՞ր ենք գնում մենք: Հեռու բոլոր արևների՞ց: Արդյոք մենք շարունակ ցած չե՞նք գահավիժում: Եվ ետ, մի կողմ, առաջ, դեպի բոլոր կողմերը: Կա՞ դեռևս վերև ու ներքև: Մի՞թե մենք մոլորված չենք խարխափում, ասես անվերջնական ոչնչում: Մի՞թե դատարկ տարածության շունչը չի փչում մեզ վրա: Մի՞թե ավելի չի ցրտել: Մի՞թե շարունակ չի իջնում գիշերը և ավելի գիշեր: Արդյոք չպե՞տք է օրը ցերեկով լապտերները վառվեն: Դեռ ոչինչ չե՞նք լսում գերեզմանափորների գոռում-գոչյունից, որ Աստծուն են թաղում: Աստվածային նեխումի հոտը չե՞նք առնում դեռ,- աստվածները նույնպե՞ս նեխում են: Աստված մեռա՜ծ է: Աստված մեռած էլ կմնա՜: Եվ մե՜նք ենք նրան սպանել: Ինչպե՞ս սփոփվենք մենք բոլոր մարդասպաններից ամենամարդասպաններս: Արբազնագույնն ու հզորագույնը, ինչ աշխարհը ցարդ ունեցել է, արնաքամ եղավ մեր դանակների տակ,- ո՞վ այդ արյունը կսրբի մեզնից: Ո՞ր ջրով մաքրագործվենք: Քավության ի՞նչ տոներ, ի՞նչ սրբազան խաղեր պետք է մենք հորինենք: Արդյոք այդ արարքի մեծությունը չափից ավելի մեծ չէ՞ մեզ համար: Արդյոք մենք ինքներս չպե՞տք է աստվածներ դառնանք դրան լոկ արժանի երևալու համար: Երբեք ավելի մեծ արարք չի եղել,- և այլևս ով էլ մեզանից հետո ծնվի այս արարքի շնորհիվ նա կպատկանի էլ ավելի բա՜ռնի մի պատմության, քան ողջ պատմությունն է եղել

մինչ հիմա»:- Այստեղ խենթը լռեց և դարձյալ նայեց իր ունկնդիրներին. նրանք նույնպես լուռ էին և ապուշ կտրած նրան էին նայում: Վերջապես նա նետեց իր լապտերը գետին, այնպես որ այն փշուր-փշուր եղավ և հանգեց: «Ես չափազանց վաղ եմ եկել,- ապա ասաց նա,- իմ ժամանակը դեռ չի եկել: Զարհուրելի իրադարձությունն այդ դեռ ճանապարհին է և թափառում է. այն դեռ չի հասել մարդկանց ականջներին: Ժամանակ է պետք շանթ ու որոտին, ժամանակ է պետք աստղերի լույսին, ժամանակ է պետք արարքներին, անգամ իրենց գործվելուց հետո, տեսնվելու և երևալու համար: Այս արարքը նրանց համար տակավին ավելի հեռու է, քան ամենահեռավոր աստղերը,- բայց, միևնույն է, նրանք գործեցի՞ն այդ»: Նաև պատմում են, որ խենթը այդ նույն օրը ներխուժել է տարբեր եկեղեցիներ և այնտեղ իր **aeternam deo**[13] **ռեքվիեմն** է երգել: Դուրս վռնդվելիս և պատասխան տալիս նա շարունակ սոսկ սրանով է առարկել. «Տակավին ուրիշ ի՞նչ են այս եկեղեցիները, եթե ոչ Աստծո դամբարան և մահարձան»[14]:

Ինչպես կարելի է կամ պետք է հասկանալ այս մեծ մտածողի նույնքան էլ ցնցող (ցնցահարույց) խոսքը: Միթե դա աստվածհայհոյություն է, կամ աթեիստական կարգախոս (թերևս քրիստոնական), կամ պեսիմիստական տրամադրության արտահայտում բնորոշ հռացիոնալ փիլիսոփայությանը, կամ գուցե «դիագնոստիկական» կանխասացություն է, ներկայի, ժամանակակից աշխարհի ու իրավիճակի քննական-վերլուծության նույնքան էլ տրամաբանական եզրահանգում: Կարելի է աներկբա ասել, որ վերջին տարբերակը հնարավոր ամենամոտ և ճշգրիտ մոտեցումն է, որն արտահայտում է Նիցշեի մտադրությունն այս կոնտեքստում:

Նիցշեի «Աստված մեռած է» խոսքը հասկանալու համար անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ նրան: Մանկության տարիներին նա աստվածապաշտ ու նվիրյալ քրիստոնյա էր: Նիցշեի պապը և հայրը լութերական եկեղեցու հոգևոր հովիվներ էին և, բնականաբար, քրիստոնեական մթնոլորտն ու ազդեցությունը բնական երևույթ էին այն տանը, որտեղ մեծացել էր ապագա փիլիսոփան: Նիցշեի կրոնական դաստիարակությամբ զբաղվել էր նրա մայրը, վերջինիս բարեպաշտական ու գործնական կրոնական հավատը Նիցշեի վրա մեծ ազդեցություն էր թողել հատկապես նրա մանկության տարիներին: Սակայն պատանեկության և վաղ երիտասարդության տարիներին ամեն ինչ կտրուկ փոխվում է և քրիստոնեության նկատմամբ ունեցած Նիցշեի հավատը փոխարինվում է սկեպտիցիզմով[15], որի արդյունքում քրիստոնեությունը նրա համար դառնում է սնահավատություն: Նրա նոր հայացքների ձևավորման վրա այս անգամ իր ազդեցությունն է թողնում Ռոզալին (Նիցշեի հորաքույրը), որի ռացիոնալիստական հավատը դառնում է դոմինանտ Նիցշեի կյանքում ու

աշխարհայացքի կազմավորման գործում: Աստիճանաբար մեծ մտածողի մոտ զարգանում է քննադատական վերաբերմունք քրիստոնեության նկատմամբ, հատկապես քրիստոնեության ռացիոնալացված տեսակի կամ ուղղության նկատմամբ: Հետևաբար, Նիցշեն այլևս չէր կարող լրջորեն վերաբերվել իր մոր բարեպաշտական հավատին, այլ անհրաժեշտ էր քննադատորեն մոտենալ «ռացիոնալացված» քրիստոնեությանը, որը հայտնվեց նրա ուշադրության կենտրոնում: Արդյունքում, Նիցշեի «մուրճի» հարվածները ուղղվում են դեպի քրիստոնեության ռացիոնալացված արտահայտության ձևերին, քանի որ նա քրիստոնեությունը պարզապես համարել է կուռք[16]:

Նիցշեն իկոնոկլաստ, այսինքն՝ պատկերամարտ մտածող-փիլիսոփա էր, ընդսմին, ցանկացած փորձ, նախաձեռնություն ի նպաստ կուռքարարության անընդունելի էր նրա համար: Ինչպես նշում է Նիցշեն «Ես չեմ ստեղծում կուռքեր... Իմ գործն ավելի շուտ՝ կուռքերը ոչնչացնելն (низвергать) է»[17]: Հետևաբար, արևմտյան մշակույթի մեջ կրոնի՝ քրիստոնեության ու փիլիսոփայության՝ մետաֆիզիկական ավանդույթի՝ հատկապես պլատոնականության, կողմից ստեղծված կուռքերը կամ «իդեալները», իսկ «իդեալները» Նիցշեն հասկանում էր որպես պլատոնական «իսկական աշխարհը», քանի որ ըստ Պլատոնի գոյություն ունի «իսկական աշխարհ» և «թվացյալ աշխարհ», պետք է կործանվեն, որովհետև այդ հորինված «իդեալական աշխարհը» թույլ չի տալիս տեսնել իրական աշխարհն այնպիսին, ինչպիսին կա և ընդունել այդ աշխարհը և դրա արժեքներն ու նշանակությունը[18] այս կյանքում:

Նիցշեի սկեպտիցիզմը լոկ «անձնական երևույթ»[19] չէր, այլ այն ակնհայտորեն արտահայտում էր իր ժամանակի մշակույթի մեջ արդեն արմատներ գցած տրամադրությունը. եթե մինչ այդ եվրոպական մշակույթի մեջ դոմինանտ էր հավատն առ Աստված, ապա Նիցշեի օրոք այն անկում էր ապրում: Ընդսմին, Նիցշեի հավատի կործանումն արդյունք էր այն գիտակցման, որ համատարած էր այդ շրջանի կրթված մարդկանց մոտ, որոնց համար կրոնական հավատն այլևս անընդունելի էր, հետևաբար, «նվիրական հավատից դեպի անհավատությունը նրա անցումը համապատասխանում է այն ամենին, ինչը նա հասկանում է որպես համատարած մշակութային փոփոխություն (տեղաշարժ)»[20]: Նիցշեն ոչ աթեիստ էր բառի դասական կամ գիտական իմաստով, և ոչ էլ նրա քննադատությունը քրիստոնեության հանդեպ ռացիոնալ աստվածաբանության կիրառման արդյունք էր[21]: Նիցշեն «բողոքող» կամ «ընդդիմացող», «ընդվզող» աթեիստ էր, ինչպես Դոստոևսկու հերոսները (ինչպես որ այդ հերոսներն անուղղակի կերպով ներկայացնում են նաև Դոստոևսկուն, ուրեմն այս տեսակի աթեիստ էր նաև ռուս գրողը): Հետևապես. Նիցշեի «Աստված մեռած է» խոսքը պետք է հասկանալ որպես մշակութային ֆենոմեն:

Երբ «խենթը» գոչեց «Ես փնտրում եմ Աստծուն», այս խոսքերը ծիծաղ հարուցեցին նրան շրջապատող մարդկանց մեջ, քանի որ Աստծուն չէին հավատում: Անհավատությունը դարձել էր բնական երևույթ, ինչպես նախկինում՝ հավատն առ Աստված: Աստվածորոնումն ապարդյուն գործ էր, որ «խենթը» կատարում էր, քանի որ նրան գտնելն այլևս հնարավոր չէր, որովհետև մարդիկ «սպանել էին» նրան, նա այլևս չկար՝ մեռած էր: Աստծո մշակութային մահն այլևս իրականություն էր արևմտյան աշխարհում: «Խենթի» դերակատարությունն իսկապես մարգարեական էր իր բնույթով: Նա կանխատեսում էր այն, ինչ տեղի էր ունենում և այն ինչը դեռ տեղի է ունենալու: Աստծո մահը մարդուն դնում է «անվերջնական ոչնչում», որտեղ միայն «դատարկ տարածություն» է: Իսկ դա նշանակում է, որ «Մեծագույն նոր իրադարձությունը,- որ «Աստված մեռած է», որ քրիստոնեական Աստծո հանդեպ հավատը անհավաստի է դարձել- արդեն սկսում է իր առաջին ստվերները նետել Եվրոպայի վրա»[22]: Հատկանշական է, որ Նիցշեի այս միտքն ավելի շուտ «մշակութային դիտարկում է, քան թե փիլիսոփայական ապացույց ... Արևմտյան մշակույթը դադարել է հավատալ Աստծուն՝ հիմնված ոչ թե խոցելի փիլիսոփայական հիմնավորումների, այլ իր փոփոխված տրամադրության պատճառով»[23]:

Նիցշեի «Աստված մեռած է» խոսքը նշանակում է քրիստոնեական կրոնի Աստծո նկատմամբ հավատի կորուստ, այսինքն՝ անհավատություն երբեմնի քրիստոնեական Աստծո նկատմամբ: Ըստ Վիլֆրիդ Դեսանի, «Աստված մեռած է» ասույթը պարզապես նշանակում է, որ առ Աստված հավատը որը կենդանի էր անցյալում, այլևս գոյություն չունի: Այն, ինչ գոյություն ուներ անցյալում հավատ էր, որի օբյեկտը (առարկան) միշտ եղել է առասպելականը: Այժմ Աստված գոյություն չունի և երբեք էլ չի ունեցել: Ընդսմին, աստվածսպանությունը սոսկ փոխաբերական սպանություն է»[24]: Երբեմնի միջնադարյան հավատն առ Աստված այլևս անընդունելի է դարձել ժամանակակից «չափահաս» կամ «հասուն» մարդու համար, որն այլևս չի զգում և գիտակցում Աստծո իրականությունը, ավելին, այդ Աստծո կարիքն այլևս չունի, քանի որ նա «թեոնոմուս» չէ՝ Աստծով չի ղեկավարվում, այլ «աուտոնոմուս» է, այսինքն՝ ինքնավար է և գերբնական կամ մեկ այլ տրանսցենդենտ, վերերկրային էակի կարիք չունի իր կյանքում առաջնորդվելու համար: Աստված որպես «աշխատանքային վարկած» այլևս ընդունելի ու գործածելի չէ ժամանակակից «չափահաս» մարդու համար: Հետևաբար, մարդիկ իրենց տեսական, ավելի շուտ գործնական աթեիզմով կամ պարզապես անհավատությամբ «սպանեցին» Աստծուն, արդյունքում «Աստված մեռած է» նրանց համար, գուցե նրանք էլ՝ Աստծո համար:

Նիցշեի կարևորությունն այս պարագայում այն է, որ ոչ թե նա ինքն է սպանել Աստծուն, այլ պարզապես նա է, որ գտել է Աստծուն մեռած կամ սպանված և բացահայտել ու բարձրաձայնել է այդ մասին բոլորին համենայն դեպս նրանց, ովքեր լսում էին նրա «խենթին» շուկայի հրապարակում: Նրա այն միտքը, որ «քրիստոնեական Աստծո հանդեպ հավատը անհավաստի է դարձել» «դիագնոստիկական» կամ ախտորոշիչ էր իր բնույթով, իսկ այս հատվածի երկրորդ միտքը, որ «արդեն սկսում է իր առաջին ստվերները նետել Եվրոպայի վրա» այսինքն նման իրավիճակի ու տրամադրության շարունակականությունը, ցույց էր տալիս այս գաղափարի մարգարեական բնույթը, որն իսկապես դարակազմիկ նշանակություն ունեցավ ոչ միայն XIX դարի վերջի, այլ նաև XX դարի մարդկանց գիտակցության ու տրամադրության մեջ առկա համատարած որակական փոփոխության համար: Նիցշեի խենթության հասնող խորաթափանցությունը մարգարեական էր, քանի որ նրա՝ «Աստված մեռած է» բանաձևը բնութագրում է նոր ոգին ու տրամադրությունը, որ բնորոշ է ժամանակակից մարդուն: Իսկապես, Նիցշեն կարողացավ տեսնել այդ հոգևոր խավարի մեջ այն իրողությունը, որ Աստված աստիճանաբար անհայտանում ու հեռանում է ժամանակակից արևմտյան մշակույթից, որի մեջ մարդիկ այլևս չեն զգում նրա ներկայությունը, այլ, ընդհակառակը, զգում են նրա բացակայությունը և անկախ այն բանից, ճիշտ է դա թե սխալ, կամ լավ է դա թե վատ, կարևոր չէ, քանի որ դա ռեալ իրականության մեջ տեղի է ունենում հենց հիմա և դեռ կշարունակի տեղի ունենալ: Որպես դիտարկման արդյունք, Նիցշեն հանգում է այն եզրակացությանը, որ Արևմտյան մշակույթի մեջ հավատն առ Աստված դադարել է լինել ճշմարտանման կամ հավանական, ավելին, այն այլևս անիրական է և ոչ հավաստի:

Ըստ Նիցշեի, եթե Աստված մեռած է, ուրեմն մարդը պետք է գրավի նրա դատարկ տեղը, եթե, իհարկե, նա կարող է դա անել ու փոխարինել Աստծուն: Իհարկե, Աստված մեռավ կամ մարդը սպանեց Աստծուն, որպեսզի նա ինքը դառնա աստված, քանի որ մարդու ինքնաաստվածացման մոլուցքը նրան մղեցրել է աստվածատենչ նկրտումների: Մարդը սպանեց աստծուն, որպեսզի հաստատի իր իշխանությունը, ցույց տա իր չափահասությունը, քանի որ «Աստծո մահը» նշանակում է մարդու չափահասությունը: Կ. Սվասյանի ճիշտ բացատրությամբ «Աստված մեռած է»՝ սա նշանակում է, մարդը վերջապես մտել է չափահասության ժամանակի մեջ, ասել է թե՝ ազատության և ինքն իր կամքին թողնվելու»[25]: «Բայց նա - պետք է մեռներ., - նշում է Նիցշեն, - նա տեսավ իր աչքերով, որոնք **ամեն ինչ** են տեսնում,- նա տեսավ մարդու խորքն ու հատակը, ողջ թաքցված անարգանքը և այլանդակությունը: Նրա կարեկցանքը ոչ մի ամոթ չգիտեր. նա սողոսկեց իմ ամենակեղտոտ անկյունները: Այդ

ամենահետաքրքրասերը, գերկպչունը, գերկարեկցողը պետք է մեռներ: Նա միշտ տեսնում էր **ինձ**, ես նման մի վկայից կամ պետք է վրեժ լուծեի – կամ ինքս պետք է չապրեի: Աստվածը, որն ամեն ինչ տեսնում էր, **նաև մարդուն**. այդ աստվածը պետք է մեռներ: Մարդը չի հանդուրժում, որ նման մի վկա ապրի»՝. Նիցշեի այս հիանալի միտքը ցույց է տալիս մարդու աստվածատենչ ձգտումը՝ դառնալու աստված այս երկրի վրա, իսկ այդ նպատակն իրականացնելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է սպանել գոյություն ունեցող, այսպես կոչված «հին» Աստծուն, որը խանգարում է մարդուն իր մտադրություններն իրագործելու համար: Սպանել Աստծուն, որպեսզի գերմարդը փոխարինի նրան ու դառնա աստված:

Նիցշեի համար «Աստված» սիմվոլ է, որն այս աշխարհի հանդեպ աշխարհայացքային-կողմնորոշիչ նշանակություն ունի, այլ կերպ դա նաև «գիտակցության սիմվոլիկ ծն»[27] է: Արևմտյան քրիստոնեության Աստվածը եղել է բարոյականության, մետաֆիզիկայի ու հոգևորի միասնության հիմնաքարը, հենքը, որի վրա կառուցվել են մարդու և հասարակության իդեալները, կյանքի իմաստն ու նպատակը, բարոյական սկզբունքներն ու նորմերը, մշակութային արժեքները, գեղագիտական նրբաճաշակությունը և հասարակության կամ պետության կառույցները և կառավարման համակարգը: Սակայն, «Աստծո մահվան իրադարձությամբ, - նշում է Ռ. Կոմսթոկը, - մոդեռն մարդու համար «Աստված» սիմվոլը կորցրեց իր կենսունակությունն ու ֆունկցիոնալությունն իր իմաստաբանական (սեմանտիկ) գործիքների շտեմարանում: Այն դադարեց հաղորդել կրոնական ուժ ու իմաստալից նշանակություն: Նշանը իմաստազրկվեց, իսկ սիմվոլը՝ մեռավ»[28]: Նիցշեի համար «Աստծո մահը» նշանակում էր, որ Աստված որպես արևմտյան քաղաքակրթության ու մշակույթի հիմք այլևս որպես այդպիսին չկա, ավելին, որն էլ ավելի սարսափելի է, «Աստծո մահը» նաև նշանակում էր բոլոր այն «ֆունկցիաների մահը», որ Աստված, որպես այդ ամենի հիմք ու սիմվոլ, գործառնել է արևմտյան մարդու ու հասարակության համար:

Աստծո մահվամբ անհայտանում և կործանվում են նաև տրանսցենդենտության զգացումն ու չափումը, այս աշխարհի համար արժեքային համակարգի առավելագույն նորմերը, մարդու կյանքի իմաստն ու նպատակը, այն հավաքական ու միասնական աշխարհայացքային-արժեքային կողմնորոշիչները, որոնց հիման վրա մարդկային կյանքն ու աշխարհը, հասարակությունն ու պետությունը կառուցվում են այս աշխարհում և, որոնցով հիմնավորվում՝ ոգեշնչվում են մարդու ձգտումներն ու նախաձեռնություններն այս աշխարհում ապրելու և հանուն կյանքի պայքարելու համար: Եվ կարելի է պատկերացնել այն մեծ ցավն ու դժբախտությունը, այն ողբերգությունը, որ ապրեց Նիցշեն՝

այդ մեծ մտածողը, պոետ-փիլիսոփան, երբ գիտակցեց, որ այդ հավաքականն ու միասնականը, այն, ինչը ամբողջացնում էր բովանդակ տիեզերքը, մարդուն, հասարակությունը, այս աշխարհն ու իրականությունը, որ կոչվում էր «Աստված», այլևս մեռած է, չկա, քանի որ մարդը սպանեց նրան, որպեսզի գրավի նրա տեղը ու իրենով փոխարինի «Աստծուն», իսկ այդ նոր մարդը, նոր մարդ-**աստվածը** պիտի լինի գերմարդը՝ այս աշխարհի **նոր աստվածը**:

Նիցշեի «մեռած Աստծո» խոսքը ցույց է տալիս այն ֆունդամենտալ փոփոխությունը, ռադիկալ իրադարձությունը, որը տեղի է ունեցել և դեռ շարունակում է տեղի ունենալ ոչ թե աստվածային իրականության, այլ մարդու գիտակցության մեջ, նրա *պատմական* գիտակցության մեջ, գիտակցություն, որը դինամիկ զարգացման գործընթաց է և անցում, գուցե, փոխակերպություն կրոնական մարդուց դեպի աշխարհիկ մարդը: Իհարկե, Նիցշեի օրոք աշխարհիկությունը կամ աշխարհիկացման գործընթացը դեռ լինելիության մեջ էր, այն դեռ կայացման փուլում էր, դա մի իրադարձություն էր, որն այդ պահին տեղի էր ունենում, հետևաբար, այն դեռ դոմինանտ երևույթ ու մտածողություն կամ կենսակերպ չէր և ոչ էլ ամբողջապես համատարած բնույթ էր կրում:

Նիցշե փիլիսոփա-մարգարեն կանխազգում և տեսնում է «Աստծո մահվամբ վերահաս լինող քաոսը, որում այլևս ոչինչ չի մնում՝ ինչը արժեք ունի և կարող է մարդուն առաջնորդել: Իր սահմաններն է տարածում հսմսատիեզերական այն հիվանդությունը, որը մի սոսկալի անուն ունի՝ ոչնչապաշտություն. սա է լինելու գալիք հարյուրամյակների (մինչև գերմարդու և գերքրիստոնեության հայտնվելը) պաթոլոգիական վիճակը»[29]: Աստծո մահը Նիցշեի համար նշանակում է, որ եթե Աստված մեռած է, հետևաբար նա այլևս չի կարող լինել բարոյականության և արժեքաբանության հիմքը, ավելին, այն բարոյական և արժեքաբանական համակարգը, որը հիմնված է եղել այժմ արդեն մեռած Աստծո վրա, այլևս անընդունելի է, ընդսմին, անհրաժեշտ է ստեղծել նոր բարոյականություն ու նոր աքսեոլոգիա, որը հիմնված չի լինի Աստծո կամ կրոնի վրա: Քանի որ ներկա ժամանակաշրջանը հնի ու նորի հարաբերակցության լարվածության ժամանակահատված է, ապա դա նշանակում է, որ դրան բնորոշ է նիհիլիստական վերաբերմունքը: Սակայն, ճիշտ չի լինի Նիցշեին համառել դասական կամ նեգատիվ իմաստով նիհիլիստ, քանի որ նա բարոյական կամ արժեքաբանական համակարգին դեմ չէ, պարզապես նման անցումային վիճակին առանձնահատուկ է նիհիլիստական տրամադրությունը մինչև որ կձևավորվի կամ կստեղծվի նոր բարոյա-արժեքաբանական համակարգ:

Նիցշեի «Աստված մեռած է» խոսքը վերաբերվում է այսպես կոչված «փիլիսոփաների Աստծուն», այն Աստծուն կամ Աստծո այն «պատկերին», այն հասկացությանը, որը ստեղծել էին փիլիսոփաները արևմտյան ռացիոնալ

փիլիսոփայության ավանդույթի համատեքստում: Այստեղ խոսքը վերաբերվում է այդ փիլիսոփայության հատկապես այն տարատեսակին, որը հիմնված է եղել պլատոնականության վրա, ըստ որի, գոյություն ունի երկու աշխարհ՝ իրական, ճշմարիտ աշխարհը, որը բացարձակ կեցություն է և թվացյալ աշխարհը, որը բացարձակ կեցության ստվերն է:

Նիցշեի «Աստված մեռած է» ասույթը արևմտյան մետաֆիզիկայի ռեքվիեմ է: Նրա համար «requiem aeternam deo» նշանակում է «requiem aeternam metaphysicae»[30]: Աստծո մահը նաև մետաֆիզիկայի մահն է, փիլիսոփայության ու մետաֆիզիկայի աստծո մահն է, այն աստծո, որը մետաֆիզիկայի շնորհիվ վերածվեց կուռքի, իսկ կուռքը պետք է մեռնի, հատկապես Նիցշեի պես իկոնոկլաստ (պատկերամարտ) փիլիսոփայի համար: «Աստված մեռած է» խոսքը , - նշում է Հայդեգերը, - նշանակում է. գերզգայական աշխարհը առանց գործուն ուժի է: Այն ոչ մի կյանք չի պարգևում: Մետաֆիզիկան, այսինքն՝ Նիցշեի համար արևմտյան փիլիսոփայությունը՝ ընկալված իբրև պլատոնականություն, հասել է վերջին: Նիցշեն իր սեփական փիլիսոփայությունը հասկանում է իբրև հակաշարժումը մետաֆիզիկայի դեմ, այսինքն՝ նրա համար պլատոնականության դեմ»[31]: Ընդսմին, Նիցշեի փիլիսոփայությունը և հատկապես նրա «Աստված մեռած է» խոսքը իր բնույթով հակամետաֆիզիկական էր: Նիցշեն և իռացիոնալ փիլիսոփայությունը ցույց տվեցին արևմտյան ռացիոնալիզմի և փիլիսոփայական-մետաֆիզիկական ավանդույթի ճգնաժամը, այն ճեղքերը, որոնք առաջացել են այդ գաղափարական համակարգի մեջ և վերջին հաշվով այդ ավանդույթի արագ զարգացող փլուզումը:

Իսկապես, «Աստծո մահը» քաոս առաջացրեց մարդկանց կյանքում, նրանց աշխարհայացքում, բարոյական ու արժեբանական համակարգերում, այն ամենում, ինչը իմաստավորում ու կենսական բովանդակությամբ էր լցնում մարդկային կյանքն այս աշխարհում: Այս մեկ՝ «Աստված» բառում ամփոփված էր այն ամենը, ինչն անհրաժեշտ էր մարդուն, ինչը նրա կյանքի հիմքն էր, կյանքի իմաստը և վերջնանպատակը: Աստծո մահվամբ մարդու ոտքերի տակից կարծես թե փլուզվեց նրա հիմքը, այն հիմքը, որի վրա նա իրեն ապահով, հաստատուն ու վստահ էր զգում, քանի որ գիտեր ու գիտակցում էր, որ կանգնած էր ամուր հիմքի, կայուն հենքի վրա: Չկա այլևս որևէ հիմք, որևէ հաստատուն մեծություն, որի վրա մարդը կկարողանա ապահով կանգնել և որից նա կկարողանա կառչել այս բովանդակ տիեզերքում սեփական վերջավոր կեցության նույնքան էլ վերջավոր ու սահմանափակ գիտակցմամբ: «Աստծո խավարումը՝, - նշել է Մարտին Բուբերը, - ահա իրական առանձնահատկությունը համաշխարհային պատմության այն ժամանակի, որի մեջ մենք ապրում ենք: Սակայն դա այնպիսի գործընթաց չէ, որը կարելի է որոշ չափով բավարար

կերպով հասկանալ, դատելով այն փոփոխություններից, որ տեղի են ունենում մարդկային ոգում»[32]: Աստծո մահը մարդու օտարման պատճառն է. օտարում ինքն իրենից, ուրիշներից, բնությունից և Աստծուց:

Սա է պատճառը, որ Ֆուկոն Աստծո մահը համարեց ժամանակակից մշակույթի գլխավոր իրադարձությունը, քանի որ մարդը մնաց միայնակ այս աշխարհում, որտեղ այլևս աստվածներ չկան, ավելին, Աստծո մահվամբ նաև մարդու կործանման սկիզբը դրվեց: Բացատրելով Նիցշեի «Աստված մեռած է» միտքը՝ Ֆուկոն նշում է, որ «Մեր ժամանակում, ի դեպ Նիցշեն արդեն մատնանշել էր այս շրջադարձային պահը՝ հաստատվում է ոչ այնքան աստծո բացակայությունը կամ մահը, որքան մարդու վերջը... Այսպիսով, բացահայտվում է, որ աստծո մահվան և մարդու վերջի մեջ կա կապ... որովհետև հենց նա է սպանել աստծուն և նա էլ պետք է պատասխան տա իր սեփական վերջավոր կեցության համար. քանի որ հենց աստծո մահվամբ նա հոսում է մուտքում և գոյատևում... Նիցշեի միտքը ազդարարում է ոչ միայն աստծո մահը, այլ նաև ... նրա սպանողի մահը»[33]: Ֆուկոյին համակարծիք է նաև պոստմոդեռն աստվածաբան Մ. Թեյլորը: Ըստ նրա, մահվան գիտակցումը, որը գերակա է պոստմոդեռնիզմի համատեքստում և բնորոշ պոստմոդեռն մտածողությանը, այն մահն է, որը «սկսում է» Աստծո մահվամբ և «ավարտվում» հենց մեր մահվամբ»[34].

Աստծո մահից հետո աշխարհը կարծես թե վերածվել է անհեթեթության և, ընդսմին, մարդը պետք է սովորի ապրել այս աշխարհի անհեթեթության մեջ անհեթեթության հետ և դրա գիտակցումով, քանի որ չկա կամ գոյություն բացակայում է այս աշխարհում որևէ իմաստ ու նշանակություն, որով հնարավոր կլինի լցնել մարդկային կյանքը որևէ իմաստավորված բովանդակությամբ:

Ծանոթագրություններ

[1] **В. Д. Губин.** Философия: актуальные проблемы. Учебное пособие для студентов вузов, обучающихся по специальности "Философия". М.: Омега-Л. 2006, с. 22.
[2] Նույն տեղում, էջ 22.
[3] **Stephen D. Crites.** Requiem Aeternam Deo? "The Christian Scholar" Vol. XLVIII, N 1. Spring 1965, p. 5.
[4] **John Cooper.** The Roots of the Radical Theology. Philadelphia: The Westminster Press, 1967, p. 160. Տես նաև **G.W.F. Hegel.** Lectures on the Philosophy of Religion, One-Volume Edition, The Lectures of 1827, Berkeley, Los Angeles, London: University of California Press, 1988, p. 468.
[5] **Георг В. Ф. Гегель.** Философия религии. В 2-х томах. Том 2. М.: Мысль, 1977, с. 290.
[6] Նույն տեղում, էջ 294.
[7] **G.W.F. Hegel.** Lectures on the Philosophy of Religion, p. 468.
[8] Նույն տեղում, էջ 311:
[9] Նույն տեղում, էջ 313.
[10] Նույն տեղում, էջ 470:

[11] Ю. Хабермас. Философский дискурс о модерне. Двенадцать лекций. М.: Весь мир. 2008, с. 93-115. Նիցշեն, լինելով պոստմոդեռնի սկզբնավորման մեկնակետ, մեծ ազդեցություն թողեց հետագա պոստկլասիկ այնպիսի փիլիսոփաների վրա, ինչպիսիք են Հայդեգերը, Բատայը, Լականը, Ֆուկոն և Դերիդան: Այս մասին տե՛ս Ю. Хабермас. Философский дискурс о модерне, с. 105, 106-115. Ընդսմին,Նիցշեի «մեռած Աստծո» գաղափարը դարակազմիկ նշանակություն ունեցավ XX դարի համար:

[12] **Հակոբ Մովսես, Ֆրիդրիխ Նիցշեի կեսօրվա երգը, Ֆրիդրիխ Նիցշե,** Այսպես խոսեց Զրադաշտը, Երևան, «Վան Արյան», 2002, էջ 6:

[13] Հավետ հիշատակ Աստծուն (լատիներեն):

[14] **Ֆրիդրիխ Նիցշե.** Զվարթ գիտությունը, Երևան, «Վան Արյան», 2005, էջ 153-155:

[15] Իր հավատի ու կասկածների մասին Նիցշեն գրել է «Բարոյականության ծագումնաբանության շուրջ» երկում, տե՛ս **Фридрих Ницше.** К генеалогии морали. В: Так говорил Заратустра. К генеалогии морали. Рождение трагедии. Воля к власти. Посмертные афоризмы. Минск: Харвест, 2005, с. 290.

[16] **Bruce E. Benson.** Graven Ideologies: Nietzsche, Derrida & Marion on Modern Idolatry, Downers Grove: InterVarsity Press, 2002, pp. 71-72. Նիցշեի կյանքի և նրա հայացքների ծևավորման մասին կարևոր մանրամասների համար տե՛ս այս գրքի հետևյալ էջերը՝ 71-75:

[17] **Фридрих Ницше.** ECCE HOMO. В: По ту сторону добра и зла, Казус Вагнер, Антихрист, ECCE HOMO, Человеческое, слишком человеческое, Злая мудрость. Минск: Харвест. 2007, с. 334-335.

[18] Նույն տեղում, էջ 335:

[19] **Bruce E. Benson.** Graven Ideologies, p. 72.

[20] Նույն տեղում, էջ 72:

[21] Նիցշեի դիրքորոշման մասին կարևոր մանրամասներ է ներկայացրել Սվասյանը. տե՛ս **К.А. Свасьян.** Примечания (Антихрист). В: **Фридрих Ницше.** По ту сторону добра и зла, Казус Вагнер; Антихрист, Ecce Homo. Минск: §Попурри§, 1997, с. 494-495.

[22] **Ֆրիդրիխ Նիցշե,** Զվարթ գիտությունը, էջ 239:

[23] **Alister McGrath.** The Twilight of Atheism: The Rise and Fall of Disbelief in the Modern World, New York, London: Galilee. Doubleday. 2006, p. 149.

[24] **Wilfrid Desan.** Friedrich Nietzsche and the Notion of God. In: Religion in Conpemporary Thought. (Ed.) George F. McLean, New York: Alba House, 1973, p. 71.

[25] **Կ. Սվասյան, Կ. Աստվածատուրով,** Ճանաչողություններ, **Ֆրիդրիխ Նիցշե,** Զվարթ գիտությունը, Երևան, «Վան Արյան», 2005, էջ 480.

[26] **Ֆրիդրիխ Նիցշե,** Այսպես խոսեց Զրադաշտը, Երևան, «Վան Արյան», 2002, էջ 294-295:

[27] **W. Richard Comstock.** Theology after the 'Death of God.' In: The Meaning of the Death of God (Ed.) Bernard Murchland. New York: Random House, 1967, p. 220.

[28] Նույն տեղում, էջ 219:

[29] **Հակոբ Մովսես,** Զվարթությունը՝ ճանաչողության մեթոդ, **Ֆրիդրիխ Նիցշե,** Զվարթ գիտությունը, Երևան, «Վան Արյան», 2005, էջ 18-19:

[30] **Bruce E. Benson.** Graven Ideologies, p. 88.

[31] **Մարտին Հայդեգեր,** Նիցշեի «Աստված մեռած է» խոսքը, **Ֆրիդրիխ Նիցշե,** Զվարթ գիտությունը, Երևան, «Վան Արյան», 2005, էջ 375:

[32] **Мартин Бубер.** Затмение Бога. В: Два образа веры. М.: АСТ. 1999, с. 455.

[33] **Мишель Фуко.** Слова и вещи: Археология гуманитарных наук. СПб: A-cad. 1994, с. 401-402.

[34] **Mark C. Taylor.** Erring: A Postmodern A/theology. Chicago & London: The University of Chicago Press, 1984, p. 6.